ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐ

ՍՐՏԻ ԽՈՍՔ

«Երանելի է այն մարդը, որ չհետևեց անբարիշտների խոսքին»
(Սաղմոս Ա 1)

Շատերն են սիրում Հիսուսին, շատերն են տարված Նրա երկնային արքայության քարոզչությամբ, բայց քչերն են կամենում կրել Նրա փառապանծ խաչը:

Շատերն են բաղձում վայելել Նրա ներկայությունն ու մխիթարության շնորհը, բայց քչերն են մասնակից Նրա չարչարանքների հավերժական ներկայությանը:

Շատերն են փորձում Նրան սեղանակից լինել, բայց քչերն են կամենում մասնակցել Նրա զրկանքներին ու տառապանքներին:

Երանի նրան, ով հասկանում է այդ ամենը:

Այդ երանելիներից է Ներսես Սրբազանը՝ Հիսուսի հավատարիմ չարչարակիցն ու ճամփորդակիցը:

Որպես Հիսուսի հետևորդ ու բարի հովիվ՝ 40 տարիներ հլու և հնազանդ կրում է խաչի զորությունն ու տառապանքը, որովհետև խղճով է վկայում:

Երանի նրան ով հասկանում է, թէ ինչ է նշանակում սիրել Հիսուսին և Նրանով ապրել:

Երանի նրան, ով ի սեր Հիսուսի կարողանում է աշխարհայինը մերժել և աշխարհի մեջ ապրել հանուն Հիսուսի:

Երանի նրան, ով արհամարհում է ատելությունը և տրվում սիրուն:

Երանի նրան, ով Հիսուսի քաղցրությունը չի փոխում անցողիկ հեշտասեր դառնության հետ:

Երանի նրան, ով հմտություն ունի զանազանելու բարին չարից, լույսը՝ խավարից, սերն՝ ատելությունից, երկինքը՝ երկրից, անսխալը՝ սխալից, հույսը՝ անհուսությունից, հոգեսփոփությունը՝ անհոգեսփոփությունից, համբերությունը՝ անհամբերությունից, սուրբն՝ անսրբությունից, օրենքն՝ անօրինությունից:

Երանի նրան, ով հանդգնում է աղաղակել. «Տերն է իմ հովիվը»:

Երանի նրան, ով Հիսուսին սիրում է Հիսուսի համար և ոչ թէ իր անձի:

Երանի նրան, ով սիրում և համբերությամբ մոտենում է սրբազործված Զոհին:

Երանի նրան, ով զոհաբերում է իրեն հանուն Զոհի:

Այդպիսին է Ներսես սրբազանը՝ պաշտամունքով ու երկրպագությամբ, բարեբարությամբ ու մխիթարությամբ, եղբայրասիրությամբ և օժանդակությամբ:

Երբեք չտրվելով հուսահատությանը՝ նա, որպես քաջ հովիվ, շարունակում է սպասավորին հատուկ նախանձախնդրությամբ տարածել Աստծո լույսն ու ճշմարտությունը՝ առանց տրտմության, միտքը հարատև սևեռած երկնային իրողություններին, հոգին դարձնելով ջերմեռանդ հանդիսարան, ձեռքին՝ բաժակը կենդանարար հաղորդության:

Հեռու անձնահաճությունից՝ խոհեմության շավղով շարունակում է իր ընթացքը:

ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ